

**TONY'S**  
FRESH & CRUSTY  
**FOOD**

غير الشكل وحافظ على النوعية  
صحبات واكل جاهز  
اطلبها من  
السوبرماركت

Charfan Est. - St. Elias Residence - Rawda - Telefax: 961 1 683 886  
P.O.Box: 2203 Jounieh-Lebanon  
website: www.tonysfood.com - E-mail: tonysfood@tonysfood.com

# ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

**AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE** *أزتك جريدة يومية سياسية وأدبية - الديرة للثقافة وإشاعة آزر وبيشيان*

1500 Լ.Ո. 76ԳՎ ՏԱՐԻ, ԹԻԻ 174 (21516) ՈՒՐԲԱԹ, 3 ՀՈՎՏԵՄԵՐ 2003 10 ԷՁ

ԱԶՐՊԵՅՅԱԼՆ. ՆԱԽԱԳԱՀՄԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

**ՀԱՅՏԱՐ ԱԼԻԵՒ ԶԵՏՍ ԿՈՉԵՅ ԻՐ ԹԵԿՆԵՐՈՒԹԻՒՆԸ**

Այրպէյճանի 80 ամեայ նախագահ Հայտար Ալիեւ երկէկիր որդիին՝ Այրպէյճանի վարչապետ Իլիամ Ալիեւի ի նպաստ յետոյ կրչեց Այրպէյճանի նախագահական ընտրութիւններուն (Հոկտեմբեր 15) իր թեկնածութիւնը: Այրպէյճանի ժողովուրդին ուղղուած ուղերձի մը մէջ Հայտար Ալիեւ Իլիամը իր «քաղաքական ժառանգորդը» հռչակած է:

Հայտար Ալիեւ Օգոստոս 6էն ի վեր բուժման կ'ենթարկուի Քիլիլէնտի (Մ.Ն.) մէջ:

**ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ**

**ՎԱՐՉԱՊԵՏ ԶԱՐԻՐԻ ԶԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՒ ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏԻ ԶԵՏ**




Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ երէկ, Դամասկոսի մէջ ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրին, որուն հետ քննարկեց երկու երկիրներու յարաբերութիւնները եւ շրջանային կացութիւնը:

Հանդիպումին աւարտին վարչապետ Հարիրի դիտել տուաւ, թէ ներկայ պայմաններուն մէջ վտանգը առկայ է բոլոր երկիրներու պարագային, բայց մասնաւոր Սուրիա եւ Լիբանան այս հանգրուանին պէտք է միակամ ըլլան, որովհետեւ անոնց միասնակցութիւնը հիմք կը ծառայէ գործակցութեան եւ ապահովութեան:

Ան նաեւ անդրադարձաւ իրաքցիներուն եւ պաղեստինցիներու ապրած դժուար իրավիճակին եւ նշեց, որ պէտք է համատեղ աշխատանք տանիլ անոնց օժանդակութեան համար:

Վարչապետ Հարիրի նաեւ տեսակցեցաւ Սուրիոյ փոխ նախագահ Ապտէլ Հալիմ Խատապի հետ եւ լեւսմիջօրէին հասաւ Պէյրութ:

**ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆԸ**



Երէկ, Պապատայի պալատին մէջ նախագահ Կորէմի Լահուտ ընդունեց երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեանը եւ անոր հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութիւնը եւ քաղաքական նորագոյն իրադարձութիւնները: Նախարար Յովնանեան նախագահին ներկայացուց նախարարութեան պիտանքն եւ վեկուցեց մարզական նոր ծրագիրներու մասին: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան նաեւ Լիբանանի մէջ գործող պակտներու եւ փութիւններու առնչուող հարցեր:

**ԻՐԱԸՐ ԲԻՐՏ ԶԻՆԵԱԼՆԵՐԷ «ՄԱԲՐԱԳՈՐԾԵԼՈՒ» ԱՍԵՐԻԿԵԻԹՐԵԱԿԱՆ ԾՐԱԳԻ՞Ր**

ԱՆԳԱՐԱ, 2 (ԱՅՓ).- Թուրքիա եւ Մ. Նահանգներ «աշխատանքային ծրագիրի մը» շուրջ համաձայնութիւն գոյացուցած են՝ հիսուսային Իրաքը «մաքրագործելու» համար քիւրտ զինեալ ըմբոստները, ըսած է թուրք դիւանագետ մը Հինգշաբթի օր:

Անգարայի մէջ, ամերիկացի եւ թուրք պաշտօնատարներու միջեւ բանակցութեանց աւարտին, Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատարներէն Նապի Սեմսոյ ըսած է, թէ որեւէ ընտրամը, ներառեալ՝ զինուորական ընտրամը, պիտի չանտեսուի՝ հիսուսային Իրաքէն ՔԱԿը մաքրագործելու համար:

Ան յայտնած է նաեւ, որ Թուրքիա պատրաստ է որեւէ ձեռով իր մասնակցութիւնը բերելու՝ օժանդակելու համար Ուաշինկթընի, որ հիսուսային Իրաքը մաքրագործել ըմբոստները:

Կ'ենթադրուի, որ ՔԱԿի մօտաւորապէս 5000 անդամներ ապաստանած են հիսուսային Իրաքի լեռնային շրջաններուն մէջ:

**«ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ»Ը ՊԱՐԶԱՊԷՏ ՀՄԱՅԵՑ**



Համաշխարհային հռչակ վայելող երաժիշտ եւ խմբավար Արամ Խաչատուրեանի ծննդեան հարիւրամեակի ոգեկոչման համահայկական բազմապարտէզի ձեռնարկներուն իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Համապայինի Լիբանանի Շրջանային վարչութիւնը՝ հիւրընկալելով Հայաստանի պարտուէտի պետական «Բարեկամութիւն» անսամպլի ելոյթները:

Պարարուեստի բարձրորակ այս կատարումներուն երէք ելոյթներուն առաջինը տեղի ունեցաւ երէկ, Հինգշաբթի, 2 Հոկտեմբերի երեկոյեան ժամը 8:30ին, «ԵՈՒՆԵՍԲՕ»ի սրահին մէջ: Նախաձեռնութիւնը կը վայելէր հովանաւորութիւնը Լիբանանի մշակութիւնի նախարար Ղապի Արիտիի: Ներկայ էին դիւանագիտական շրջանակներ, հոգեւոր պետեր, պետական, ազգային, կուսակցական, միութենական անձնատիրութիւններ, հայ եւ օտար թղթակիցներ:

Յետ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն յոտնկայս ունկնդրութեան, հայրենի արուեստագէտ Նորայր Մեհրապեանի ղեկավարած այս պարախումբը սրահը ամբողջութեամբ լեցուցած հանդիսատեսներուն մատուցեց իրենց բազմաբնուէտ եւ ինքնուրոյն ռճով յատկանշուող պարերու եւ պարային համադրումներու ընտրանի մը, որուն բացումը կատարեցաւ Արամ Խաչատուրեանի յորինումներու պարային փունջով մը՝ առ ի մեծարում մեծանուն երաժիշտին:

Աւելի քան երկու տասնեակ պարերէ բաղկացած յայտագիրին մէջ տեղ գտած էին ազգագրական պարեր, ինչպէս նաեւ հայկական ժողովրդային եւ օտար երգերով եւ մեղեդիներով պարադրուած ու բեմադրուած ստեղծագործութիւններ:

«Բարեկամութիւն» համոյթի յաջորդ երկու ելոյթները տեղի պիտի ունենան Շաբաթ առաւօտեան ժամը 11:30ին եւ երեկոյեան ժամը 8:30ին, «ԵՈՒՆԵՍԲՕ»ի սրահին մէջ:

Ելոյթին մանրամասնութեանց կ'անդրադառնանք յաջորդիւ:

Ashnag

**ՀԱՅԱՅԽԱՐԸ ՀԱՅԱՅԽԱՐԸ**

**ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՎԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԽԱՓՎՆՈՒԻ**

Թուրքիոյ մէջ երկրորդ անգամ ըլլալով արգելքներ կը դրուին Պոլսոյ պատրիարք Մեսրոպ արք. Մուրաֆեանի վան այցելութեան դէմ: Այս անգամ խափանուած է Նարեկի 1000ամեակին առիթով դէպի վան ուխտագնացութեան Մուրաֆեանի մասնակցութիւնը:

Երէկ առաւօտ, երբ պատրիարքին պատուիրակութիւնը հասած է օղակայան, հակառակ նախապէս գոյացած համաձայնութեան, պատրիարքին յայտնած են, թէ օղակայան մէջ տեղ չկայ:

Պոլսոյ «Մարմարա» օրաթերթը, որ հրապարակեց լուրը, դիտել կու տայ, որ ապիկա երկրորդ անգամն է, որ վանական արգելքներ կը դրուին պատրիարքին վան մեկնումին դիմաց: «Պատրիարքարանը հարց կու տայ, թէ ոմանք արդէօք կ'անհանգստանան պատրիարքին վան այցելութեան...», կը գրէ «Մարմարա»: Պատրիարք Մուրաֆեան ցաւ յայտնած է, որ չէ կրցած մասնակցիլ ուխտագնացութեան, որուն կը մասնակցին Հայաստանէն թէ Սփիւռքէն հարիւրաւոր ուխտաւորներ:

**ԵՈՒՆԵՍԲՕԻ 32Դ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ Կ'ԱՐԾԱՐԾԷ ԶԱՅԿԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐՈՒ ԲԱՆԴՈՒՄԸ ԱԶՐՊԵՅՅԱԼԻ ԿՈՂՄԷ**

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան Փարիզի մէջ մասնակցեցաւ ԵՈՒՆԵՍԲՕԻ 32րդ ընդհանուր ժողովին: Իր արտասանած խօսքին մէջ Օսկանեան անդրադարձաւ Այրպէյճանի մէջ հայկական յուշարձաններու ոչնչացման հարցին:

Օսկանեան դիտել տուած է, թէ այդ շրջանին մէջ հայութեան ներկայութիւնը վկայուած է հի-Շարք՝ էջ 2

**ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՎՐԱՍՏԱՆ ԿԸ ՓՈՐՁԵՆ ՅՍՏԱԿԱՑՆԵԼ ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԻՋԵԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

Հայաստանի եւ Վրաստանի համապատասխան յանձնաժողովները կը յատակացնեն երկու երկիրներուն միջեւ պետական սահմանները: Հոկտեմբեր 1ին Երեւանի մէջ կայացաւ Հայաստանի եւ Վրաստանի պետական սահմաններու սահմանագծման յանձնաժողովներու միացեալ նիստը: Կողմերը տեղեկութիւններ փոխանակեցին յատուկ խումբերու կողմէ կատարուած աշխատանքին մասին եւ համաձայնեցան Հայաստանի եւ Վրաստանի միջեւ սահմանագծուելիք Շարք՝ էջ 2

**ՅԱՅԵԻԹՈՒՐԸ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ԳԾՈՎ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԻԵՆՈՅՆ ՅԱՆԿԵՐԳԸ ԿԸ ԿՐԿՆԷ...**

Թուրքիոյ նախագահ Անիտ Սեպեր Թուրքիոյ խորհրդարանին մէջ ունեցած իր ելոյթին ընթացքին անդրադարձած է Հայաստանի հետ Թուրքիոյ յարաբերութիւններուն: «Թուրքիա նպատակ ունի բարելաւել յարաբերութիւնները Հայաստանի հետ, սակայն այդ նպատակին իրագործումը կախեալ է այն հարցէն, թէ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը որքանով կը համապատասխանէ օրէնքի սկզբունքներուն, եւ Հայաստան որքան կը ցանկալ լուծել դրացիներուն հետ իր հարցերը», յայտարարած է Սեպեր: Ան նաեւ նշած է, թէ «Հայաստան պէտք է օգտագործէ վերջին առիթը իր անցեալին հետ հաշտուելու համար եւ հարցը պէտք է ձգէ պատմականներուն»: Ըստ «Այդպիսի» ձայնասփիւռի կայանին, Սեպեր ըսած է. «Այդպիսի դրական պարագան մը գործնական ներդրում կ'ըլլայ ամբողջ Հարաւային Կովկասի կայունութեան եւ բարգաւաճման մէջ»:

**ՓԱՐԻՉԻ ՄԷՋ ՕՍԿԱՆԵԱՆ ԵՐԿԱՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԸ ՈՒՆԵՑԱՒ ԵԱՀԿԻ ՄԻՆԱՔԻ ԽՄԲԱԿԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան Փարիզի մէջ հանդիպում ունեցած է Լեռնային Ղարաբաղի տարանախի յուժման ԵԱՀԿ Միջազգային խմբակի նախագահներ Ենրի Մերկիլիակովի (Ռուսիա), Հանրի Ժագոյէնի (Ֆրանսա) եւ ՌուսոյՖ Փերիկայի (Միացեալ Նահանգներ) հետ: Քննարկուած են տագնապի յուժման գործընթացի ներկայ վիճակը եւ հետնակարները: Երէք նախագահները անդրադարձած Շարք՝ էջ 2

**ԲԱՐԻ ՎԵՐԱՄՈՒՏ**



Իրաքանչիւր վերամուտ ինքնին յաջողութիւն է: Վերամուտը սկիզբն է երկար ուղիի մը, որ աշակերտութիւնը պիտի առաջնորդէ դէպի լուսաւոր ապագայ: Աւելիին ձգտելու, լաւագոյնը կատարելու եւ անսխալ գործելու առիթ մըն է անիկա:

Հայկական վարժարաններու վերամուտն ալ բնականաբար տարբեր չէր պիտի իմաստով: Տնօրէն, ուսուցիչ, ծնողք եւ աշակերտ արդար անկեկարելի են: 2003-2004 կրթական տարեշրջանը՝ ներուզ եւ լաւատեսութեամբ դիմաւորեցին 2003-2004 կրթական տարեշրջանը: Անշուշտ դժուարութիւնները միշտ ալ առկայ են եւ դպրոցէ-դպրոց կը տարբերուին, սակայն ձգտումը կը մնայ նոյնը՝ ՀԱՅ դպրոցին մէջ ՀԱՅ աշակերտներուն շարք՝ էջ 10

**ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ**

**ՆԱԽԱԳԱՀ ՊԱՇԵՐԱՐ ԱՍԱՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱՍՈՒՏ ՊԱՐԶԱՆԻՆ**

ԴԱՄԱՍԿՈՍ, 2 (ԱՅՓ).- Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ եւ Իրաքի իշխող խորհուրդի անդամ քիւրտ ղեկավար Մասուտ Պարպանի կոչ ուղղեցին կայունութեան վերահաստատման Իրաքի մէջ, հաղորդեց «Սանա» լրատու գործակալութիւնը Հինգշաբթի օր:

Լրատու գործակալութիւնը աւելցուց, որ երկու ղեկավարները անհրաժեշտ նկատեցին ապահովութեան ու կայունութեան վերադարձը Իրաք: Անոնք նաեւ պարտաւորեցին յայտնեցին Իրաքի ազգային միասնակցութեան անբազանց մարտնչութիւնը:

Պարպանի Դամասկոս ժամանած էր Չորեքշաբթի օր, տեսակցութիւններ ունենալու համար սուրիացի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ: Պարպանի հանդիպում ունեցաւ փոխ նախագահ Ապտէլ Հալիմ Խատապի հետ: Տեսակցութեան աւարտին, Պարպանի ըսաւ, որ Իրաք թափանցող օտարներ հարցեր կը ստեղծեն իրաքի ժողովուրդին համար: Ան աւելցուց, որ երբեմն տեղի ունեցող ահաբեկչական գործողութիւններուն զինը կը վճարէ իրաքի ժողովուրդը:

Սուրիա, որ խստիւ մերժած ու ընդդիմացած էր Իրաքի դէմ պատերազմին, կը պահանջէ, որ իշխանութիւնը շուտով յանձնուի Իրաքի ժողովուրդին:

### ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՀՐԱ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱՄԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Նախկին վարչապետ Սելիմ Հրա երկ ընդունեց այցելությունը Համա շարժումի պատուիրակության, որուն մաս կը կազմէին Լիբանանի մէջ Համա միջազգայն ուսանող Համա տան եւ արտաքին յարաբերութիւններու պատասխանատու Ալի Պարաբէ:

Պատուիրակութիւնը շնորհակալութիւն յայտնեց Հրաի պաշտօնակատնէն տաճարային նկատմամբ իր որդեգրած կեցուածքին համար: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան նաեւ պաշտօնակատնէի ժողովուրդին ներկայ կացութիւնը, անոր ապրած տառապանքները եւ պաշտօնակատնէի տաճարային վերջին իրադարձութիւնները:

### ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

Հրապարակի վրայ է ծահանդուխտի «ՃԱՍՐԵԶՐԻ ԶՐՈՅՑՆԵՐ» գիրքը: (Զրոյցներ Լիբանանի արուեստագետներու հետ) Համազգային «Վահէ Սեթեան» տպարան:

### ՄԱՀԱԶԴ

Տիար Բիւզանդ վարդապետեան  
Տէր եւ տիկին Վարդան վարդապետեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Յարութիւն վարդապետեան  
եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Վահէ վարդապետեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Անդրանիկ Ղազարեան  
Տէր եւ տիկին ժան Մարկոսեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Վահրամ վարդապետեան եւ զաւակունք  
Սարգիսեան ընտանիք  
Սէմէրեան ընտանիք  
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր եւ հարազատին:

### ՈՎՍԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆԻ (ՏԾԵԱԿ՝ 1938ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 2 Հոկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 10:00ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 3 Հոկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայ ընդունիլ իրբեւ մահազդ:  
● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ամմոն, «Թուֆիթ Ռափի» շէնք, 4րդ յարկ, Եանպուրի եկեղեցիին մօտ, Շաբաթ 4, Կիրակի 5 եւ երկուշաբթի 6 Հոկտեմբերին:

### ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Սարգիս եւ Մանուշակ Թորոսեան  
եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Մելքոն եւ Ազնիւ Թորոսեան  
եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Վահէ եւ Աստղիկ Տատուրեան  
եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Յարութի եւ Սիլվա Մխիթարեան  
եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Մահմուտ եւ Լենա Ֆաուզ եւ զուսորդ  
Տիար Լեւոն Թորոսեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Արա Թորոսեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Պետրոս Գունտազեան եւ զաւակունք  
Թորոսեան ընտանիք  
Գունտազեան ընտանիք  
Նանէճեան ընտանիք  
Քէօսէեան ընտանիք  
Քէօզէրեան ընտանիք  
Նահարեան ընտանիք  
Գըլընեան ընտանիք  
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, հօրաքրոջ, մօրաքրոջ եւ հարազատին:

### ՇԱԸԷ ՍԱՄՈՒԷԼ ԹՈՐՈՍԵԱՆԻ (ՏԾԵԱԿ՝ Տարսօն, 1920ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 2 Հոկտեմբեր 2003ին, առաւօտեան ժամը 5:00ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 3 Հոկտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայ ընդունիլ իրբեւ մահազդ:  
● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Զոքաթ Էլ Պլաթ, «Արաբիֆի» շէնք, 2րդ յարկ, քի 8, Ուրբաթ 3, Շաբաթ 4 եւ Կիրակի 5 Հոկտեմբերին:  
● Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել Ս. Նշան Մայր եկեղեցւոյ վերջին ընտանիքին ֆոնդին:

### ԶՕՐ. ՄԻՇԷԼ ԱՌԻՆԻ ՀԱՐՅՈՎ

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԵՄՊԱՆԻՆ ՄԻՋԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԽՍՏԻ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Արդարադատութեան նախարար Պահիժ Թապարա Վոր. Միշէլ Առիւնի հարցով ամերիկացի դեսպանին միջամտութեան մասին խօսելով դիտել տուաւ, թէ Լիբանան, որ ինքզինք կը յարգէ եւ միշտ պնդէ իր կայեքը միջազգային ընտանիքին հետ դրական պահելու իմաստով, չի կրնար արտօնել, որ այլ երկիրներ միջամտեն իր դատական համակարգին:

Ան նշեց, թէ Լիբանանի արդարադատութեան նախարարութիւնը լաւագոյնս կը կատարէ երկրին մէջ արդարութեան հաստատման համար եւ չի կրնար ընդունիլ, որ արտաքին կողմեր խառնուին ներքին դատական հարցերուն եւ որոշումներուն, որովհետեւ Լիբանան ունի իր յստակ օրէնքները, որոնք սահմանուած են իր բոլոր քաղաքացիներուն համար:

Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանին այս միջամտութեան նկատմամբ բողոքեցին նաեւ երկրագործութեան նախարար Ալի Հասան Խալիլ եւ բազմաթիւ երեսփոխաններ, որոնք դիտել տուին, թէ նման քայլ դէմ է ՄԱԿի սկզբունքներուն:

## ՕԺԵՐՈՅԻ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԸ ԳՈՐԾԱԴՈՒԼ ԿԱՏԱՐԵՑԻՆ

Պէյրութի եւ այլ շրջաններու Օժերոյի պաշտօնէաներն ու աշխատատեղերը երկէ գործադուր կատարեցին եւ պնդեցին, որ իրենց պատանդները չեն թողնուիր:

Եակներուն դռներուն առջեւ եւ իրենց բողոքները ներկայացուցին տիրող կացութեան դէմ:

Աշխատատեղերու յանձնախումբի նախագահ ճորճ Սթֆէն Խանջնեանը գոհացում չտրուի:

Անոնք հաւաքուեցան իրենց գրասենտօնէաներուն պատանդներն ու իրաւունքները, որոնք գլխաւորաբար կը վերաբերին պաշտօնէաներուն եւ գործէ արձակումէ ետք ստանալիք իրաւունքներուն:

Ան դիտել տուաւ, թէ պաշտօնէաներն ու աշխատատեղերը յաջորդ հանգրուանին՝ 23 Հոկտեմբերին պիտի դիմեն բաց գործադուրի:

### 365 ՕՐԵՐԵՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանձնեն օրուան մը ճաշի ծախսը 300 տոլարով: Սիւլեան ընտանիք, Յակոբ Սիւլեանի մահուան առիթով:

### ՀԱՍԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացնէ  
«ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ»Ը  
Ժողովուրդի բուն պահանջին ընդառաջելով Յաւելեալ ձեռնարկ (ցերեկոյթ) Շաբաթ 4 Հոկտեմբեր 2003ին, առաւօտեան ժամը 11:30ին, ԵՈՒՆԵՍԿՕ-ի սրահին մէջ:  
ՄԱԿ՝ 10,000 Լ. Ո.

### ԱՆՆԱՅԻՆ Բ. ՇՐՋԱՊՏՈՅՑ ԴԷՊԻ ԵՐԵՒԱՆ ԵՒ ԾԱՂԱՎՅՈՐ 19ԷՆ 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003

1.- Ա. կարգի պանդոկ, լծան պոլիտեքնոլ, զին փոխան 575\$ միայն 395\$ քոնքը Հայկէն:  
Կը խնդրուի 5-12 Հոկտեմբեր մասնակցողները իրենց անձնագրերը յանձնեն մեր գրասենակը:  
2.- 12 Հոկտեմբեր, Կիրակի, միտայ պոլիտեքնոլ դամակոս, Սեւնայա, Պուտանի մէջ ճաշկերոյթ-խրատանք, նուագախումբի եւ արարական եզրապատի, սուրհանգի, իրաքի, եւ այլ երգիչ երգչուհիներու ընկերակցութեամբ:  
ՅԱՆՕԹ- Բոլոր անոնք, որոնք Աշտան Թուրքի որդի մէջ շրջապոլիտեքնոլ մասնակցած են, զին փոխան 30\$ միայն 20\$: Շատ սահմանափակ քիւով տեղեր:  
Արձանագրութեան համար դիմել Աշտան Թուրքի հետ. 01-261177, 01-240654 եւ 03-233978 քիւերուն:

### ՀԱՍԱԶԳԱՅԻՆ ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Արամ Խաչատուրեանի ծննդեան 100ամեակին առիթով  
Հայաստանի Պարարուեստի Պետական  
ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ ամսամպլը  
ՀԱԼԵՊԻ ՄԵՋ  
Տեղի կ'ունենայ Կիրակի, 5 Հոկտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը 8:00ին, Հ. Բ. Ը. Մ.ի Նազարեան սրահին մէջ:

### ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ ԿՐԹԱՐԾԷ...


Շարունակուած Ա. Էջէն  
նէն ի վեր, եւ պատմական այդ իրողութիւնը ծիտելը կամ վերատեսութեան ենթարկելը կարելի չէ: Նախարարը բողոք յայտնած է մշակութային արժէքներու, յատկապէս՝ Նախիջեանի Ջուղա քաղաքի հայկական գերեզմանատան շուրջ 5000 խաչքարերու ոչնչացման առնչութեամբ: «Ականատեսները սահմանին միւս կողմէն նկատած են, որ այդ «գործողութիւնները» իրահանգուած կրնան ըլլալ կառավարութեան միջազգային մարմինները: Այս պատմական ու մշակութային անփոխարինելի նմուշներու անհետացումը ցոյց կու տայ, որ Արաբիան իր անցեալին սարսափող երկիր է», շեշտած է Օսկանեան:

### ՕՍԿԱՆԵԱՆ ԵՐԿԱՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ...

Շարունակուած Ա. Էջէն  
են նաեւ Հարաւային Կովկաս իրենց յառաջիկայ այցելութեան հաւանական թուականներուն, ցանկութիւն յայտնելով շրջան այցելել ԵԱԿԵԼՃԱՆԻ նախագահական ընտրութիւններէն ետք: Անոնք նաեւ նախարար Օսկանեանի տեղեկացուցած են, թէ ԵԱԿԵԼ գործող նախագահ, Հարաւային արտաքին գործոց նախարար Եսափ Տէ Հուսի Շեֆըր մտադիր է Հոկտեմբերի վերջաւորութեան այցելութիւն մը տալ Հարաւային Կովկաս:  
Նախարար Օսկանեան նաեւ տեղեկացուց, որ մօտ երկու ժամ տեւած հանդիպումին ընթացքին Միւսքի խմբակի նախագահութիւնը տագնապի լուծման նոր առաջարկներ չէ ներկայացուցած: Ան նշեց, որ հանդիպման ընթացքին միջնորդներուն յստակացուցած է այն սահմանները, որոնց մէջ Երեւան կրնայ ձկուտութիւն ցուցաբերել, միաժամանակ ընդգծած է հայկական կողմին ակնկալութիւնները տագնապի լուծման գործընթացին:

### ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՎՐԱՍՏԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն  
պետական սահմանը բաժնել չորս մասի: Անոնք որոշեցին երկու ամսուան ընթացքին նախապատրաստել երկու երկիրներուն միջեւ պետական սահմանագիծի ստեղծութիւնը եւ վայն ներկայացնել յանձնաժողովներու միացեալ յաջորդ նիստին, որ տեղի պիտի ունենայ Թիֆլիսի մէջ, յառաջիկայ Գեղտեմբերին:



## معهد بيلوس

للتعليم المهني والتقني

### BT

### بكالوريا فنية

### TS

### إمتياز فني

### TDS

### تكنولوجيا الاختصاص

- منهاج فرنسي. منهاج إنكليزي -

خريجو معهد بيلوس يشكلون ظاهرة حضارية وإقتصادية في لبنان والعالم

كن واحداً منهم

### للمراجعة والتسجيل

- \*فرن الشباك - سنتر أبراج 01/292517
- \*حارة حريك - طريق المطار 01/273813
- \*الدورة - بناية الضمان 01/894600
- \*عين زحلنا - الشوف 05/230 400

## 2003-2004 ՏԱՐԵՇՐԶԱՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ՏԱՐԻ

# ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԸ՝ ԲՈՒՈՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ, ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ, ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ, ՍՈՒՐԷՆ ԽԱՆԱՍԻՐԵԱՆ, ՌՈՒԲԻՆԵԱՆ ԵՒ «ՅԱՌԱՋ» ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶՆԵՐՈՒՆ 2003-2004 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԸ ԱՆՎՃԱՐ

ՆՇԱՍՐ

ԳԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԳԸ ՏԵՐՆ Է ԻՐ ՅԱՆՉՆԱՌՈՒԹԵԱՆ

Ժողովուրդներու յոյսը, ուժը եւ գոյատեւելու գրաւականը իրենց յանձնառու երիտասարդութիւնն է: Մանաւանդ ազգային դատեր ունեցող ժողովուրդները իրենց յարատեւման եւ արժանապատի կեցութեան պահպանները կը համարեն իրենց երիտասարդութեան այն հատածը, որ ականջալուր իրեն ուղղուած կոչին, ճիշդ պահուն յարմարագոյն ձեռով կը միջամտէ եւ կը պահանջէ իր ներկայութիւնը:

Չորեքշաբթի երեկոյեան Պիէլի ցուցարահներուն մէջ եւ անոնց մուտքերուն դաշնակցական երիտասարդներ՝ տղաք եւ աղջիկներ հասարակ էս, ցուցական արարքով մը փաստեցին, թէ այնքան մը քաղաքականացած են, որ կրնան իրանանեան հանրային կարծիքին յիշեցնել երկու չափ երկու կշիռ քաղաքականութեան մեղկութիւնը:

Պիէլի ցուցարահներուն մէջ կարեւոր մասը յատկացուած է երեք օրերու վրայ երկարող ցուցահանդէսի մը, ուր թրքական գործարաններ եւ հաստատութիւններ Turkish fashion fair անունով տակ ցուցադրութեան դրած են իրենց արտադրութիւնները:

Ներկայիս Լիբանանը վերածուած է թրքական արտադրութիւններու դիրքին շուկայի մը, որուն մէջ մասը կը կազմէ հայկական թաղամասերու շուկաները: Ասիկա կը մատնանշենք փաստաթուղթի մը առանց մատի ետեւ պահուրտելու, որովհետեւ, իմաստակներ կրնան գիտարարի հովեր առնելով՝ բացագանչել, որ «ինչ գործ ունիք Պիէլի մէջ, նախ ձեր ներքին շուկաները մաքրեցէք թրքական արտադրութիւններէն»:

Այսպիսիները իրենց պատասխանը կը ստանան յարմար պահուն:

Վերադառնանք Պիէլ: Մեր տղաքն ու աղջիկները ուզեցին պարզապէս յիշեցնել, որ երբ քաղաքական հաւաքներու ընթացքին խանդավառ ճառերու մէջ Թուրքիան կը յիշուի իբրեւ Իսրայէլի պիւնակը, բնականաբար կարելի չէ պիւնակական մարտին մէջ մեր թշնամիին գործակիցին հետ տնտեսական գործընկերութիւն ստեղծել, իրանանեան շուկաները այդպէս սանձարձակօրէն բանալ թրքական արտադրութիւններուն դիմաց, որոնք նորօրեայ հորդաններն են:

Երբ անցեալին կիսավարենի եւ բարբարոս թուրքերն են արշաւողները, ներկայիս թրքական արտադրութիւններն են, որոնք կ'ողողեն ամէն տեղ եւ հոս՝ Լիբանանի մէջ, կը սպառնան տեղական արտադրութիւններուն: Ասիկա պատ շուկայական տնտեսութեան չափանիշներուն եւ օրէնքներուն հետ գործ չունի, որովհետեւ մեր տղոց եւ աղջիկներուն կատարած յիշեցումը իրանանեան հանրային կարծիքը իր թմբիրէն արթնցնելու փորձ մըն էր, որ յաջողութեամբ պսակուեցաւ:

Դաշնակցական երիտասարդը Երեքշաբթի երեկոյեան Պիէլի ցուցական արարքին ամբողջ տեսողութեան փաստեց, որ գիտէ ինչպիսիք պահել, մանաւանդ շատ լաւ ըմբռնած է իր արարքին ամբողջ խորքը:

Եւ այս հասկացողութեան արդիւնքը եղաւ Turkish fashion fair-ի ներկայ հայ վաճառականներու գլխիկոր հեռանալը:

Մեր տղաքն ու աղջիկները հայ վաճառականներուն ալ ուզեցին բան մը յիշեցնել:

Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

Arabic header with logos and text: البيروت, 14 1403, and various Arabic words like السفر, النصار, الزيار, المستقبل, الاضواء.

Վարչապետ Հարիրիի եւ մարտնչներու Սֆէյր պատրիարքի Ֆրանսա այցելութիւններն ու ունեցած կեցումները, իրանանեան կեանքն ու հանրութիւնը յուզող պահանջները, ինչպէս նաեւ գերիներու փոխանակման առնչութեամբ Հրկայլայի եւ Իսրայէլի միջեւ տեղի ունեցած բանակցութիւնները կը հանդիսանան 2 Հոկտեմբերի իրանանեան արտադրութիւններու Լիբանանի կեանքին վերաբերող գլխաւոր հարցերը:

Միջազգային եւ շրջանային իրադարձութիւններուն կարգին պաղեստինեան ղեկավարներու սպանութիւնը, Իրաքի առնչութեամբ նոր ծրագրի մշակումը եւ Իրանի կորիպային զենքերու շուրջ ծագած բանավեճը կը գրաւեն հիմնական տեղը:

«Մուսթաֆայալ» ի համաձայն, Իսրայէլ կը շարունակէ ապահովութեան պարիսպի կառուցումը, իսկ Քոնրէյ 12 նախարարական կառուցած իր կառավարութեան անդամներուն անունները պիտի յայտարարէ:

«Քիֆահ Արապի» ղիտել տուած է, թէ հասկանալի ամերիկեան կարմիր լոյսին, Իսրայէլեան կանաչ լոյսով ապահովութեան պարիսպի առնչութեամբ:

Ըստ «Նահար»-ի, Շարոնի կառավարութիւնը Այսրյորդանանը խեղդեց յաւելելով 5 պատեր կառուցելով բնակեցման վայրերուն շուրջ:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ Ուաշինկթըն յայտարարեց. «Սատուամ խաբէց մեզ կործանարար զենքեր ունենալու առնչութեամբ»:

«Նահար» նշած է, թէ Ուաշինկթըն բարեփոխումներ կ'առաջարկէ Իրաքեան ծրագրին շուրջ եւ կը պատկերացնէ, որ պանապանապետութիւնը պատկանողներ պիտի հարթեն կառավարութեան փոխանցման գործընթացը:

«Մուսթաֆայալ» համաձայն, Պէթլը արտաքին գործոց նախարարութեան կը փոխանցէ իր երկրին մտահոգութիւնը Աունի հետապնդման հարցով:

Թերթը նշած է, թէ Սֆէյր յայտարարեց, որ սահմանադրութիւնը օրէնք չէ եւ կարելի չէ պայմանաւորել իրանանեան անջնջը:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ Սֆէյր կը շեշտէ Աունի ազգայնականութիւնը եւ որեւէ պատճառով կը մերժէ սահմանադրութեան փոփոխութիւնը:

«Մուսթաֆայալ» համաձայն, Սֆէյր պատրիարք Փարիզի մէջ 5

ԱՅՆ ԼՈՒՐԵՐ

«Քիֆահ Արապի» գրած է, թէ պաշտօնական յանձնախումբ մը կը պգուշացնէ Պուշի իշխանութիւնը եւ կը հաստատէ, թէ անոնց դէմ ամերիկեան առեւտրութիւնն ու հակակրօնային զինուորական վաճառքի սահմաններու:

«Նահար»-ի համաձայն, Պապ մասնակցեցաւ շաբաթական հանդիպումին եւ թէեւ արթուն, սակայն շատ յոգնած էր:

Թերթը ղիտել տուած է, թէ Շիրաք Ապտալլա թագաւորին հետ տեսակցելէ ետք յայտնեց, թէ ինք յաւատեալ չէ Իրաքի հարցով:

«Նահար» նաեւ լուսարձակի տակ առած է արաբ եւ իսլամ երկիրներու մէջ ամերիկեան ընդհանուր դիւանապետութեան այն արտապայտութիւնը, ըստ որուն, անոնք ձախողեցան թէ յստիկանութիւնը:

«Մուսթաֆայալ» ղիտել տուած է, թէ հասկանալի ամերիկեան կարմիր լոյսին, Իսրայէլեան կանաչ լոյսով ապահովութեան պարիսպի առնչութեամբ:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ Ուաշինկթըն յայտարարեց. «Սատուամ խաբէց մեզ կործանարար զենքեր ունենալու առնչութեամբ»:

«Նահար» նշած է, թէ Ուաշինկթըն բարեփոխումներ կ'առաջարկէ Իրաքեան ծրագրին շուրջ եւ կը պատկերացնէ, որ պանապանապետութիւնը պատկանողներ պիտի հարթեն կառավարութեան փոխանցման գործընթացը:

«Մուսթաֆայալ» համաձայն, Պէթլը արտաքին գործոց նախարարութեան կը փոխանցէ իր երկրին մտահոգութիւնը Աունի հետապնդման հարցով:

Թերթը նշած է, թէ Սֆէյր յայտարարեց, որ սահմանադրութիւնը օրէնք չէ եւ կարելի չէ պայմանաւորել իրանանեան անջնջը:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ Սֆէյր կը շեշտէ Աունի ազգայնականութիւնը եւ որեւէ պատճառով կը մերժէ սահմանադրութեան փոփոխութիւնը:

«Մուսթաֆայալ» համաձայն, Սֆէյր պատրիարք Փարիզի մէջ 5

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ «ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵԻԱՏՐԵՑ ԸՆԿ. ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆԸ

Հայաստանի անկախութեան հռչակման 12րդ տարեդարձին առիթով, Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան Երեւանի մէջ հանրապետութեան բարձրագոյն պարգեւներ (շքանշաններ եւ մետալներ), ինչպէս նաեւ պատուաւոր կոչումներ շնորհեց տարբեր մարզերու մէջ խումբ մը վաստակաւոր գործիչներու:



Նախագահ Քոչարեան, հայ մշակույթի եւ գրականութեան բնագաւառէն ներս, «Մովսէս Խորենացի» շքանշանով պարգեւատրեց սփիւռքայ վաւերական գրագէտ, «Բագին» ամսագիրի երկար տարիներու խմբագիր ընկ. Պօղոս Մնայեանը՝ իր ունեցած գրական-հասարակական բեղուն գործունէութեան համար:

Advertisement for Hamazkayin Armenian Educational and Cultural Society. Includes text: ՀԱՄԱԶԳԱՅԻՆ Լիբանանի Երջանային Վարչութիւն HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY. ARAM KHATCHADOURIAN 100th ANNIVERSARY. Under The Patronage of H.E. MR. GHAZZI AL ARIDI, Minister of Culture. ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ Հայաստանի Պարարուեստի Պետական Անսամպլ. Գեղարուեստական Վեկավար՝ Մովսէս Խորենացիի Անուան Շփանջանակիր՝ ՆՈՐԱՅՐ ՄԵՀՐԱՊԵԱՆ. THURSDAY 2 OCTOBER, SATURDAY 4 OCTOBER 2003, AT 8:30 PM IN UNESCO PALACE. Tickets on Sale: Down Town BHV Jnah, Hamazkayin Library, Discotheque Geka, Studio Vatche, Library Obelix Antelias. Includes images of a woman and a bottle of Arzni mineral water.

Advertisement for State Dance Troupe of Armenia. Text: ՔՄԵՏԱՌՈՒՄՈ Տեր եւ տիկին Սարգիս եւ Էլմաստ Սարգիսեան բախտաւորուած են մանջ գաւակով մը՝ ՅԱՐՈՒԹ 2 Հոկտեմբեր 2003.

Advertisement for Cigarettes. Text: «ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»-Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ. 8:30.- Լիբանանեան մամուկի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն 8:45.- «Աստղեր» 9:40.- «Առուօտեան տոն» 11:30.- Լիբանանեան մամուկի խորագիրներու ընթերցում՝ հայերէն 11:45.- «Լեռ Կամսարի մտերմութեան մէջ» 1:30.- Շայաստանեան լուրեր 3:00.- Hit Parade. արաբերէն յայտագիր 4:45.- «Քարի երեկոյ Վանայ Չայնէն». Գոր յայտագիր. ուղղակի ձայնասփռում՝ այլազան եւ հետաքրքրական նիւթեր, երգեր, հարցազոյց եւ այլն 7:00.- «Ուրմիկ». խաղ - մրցանք. ուղղակի ձայնասփռում.












# ՄԱՐԶԱԿԱՆ



# ԱՇԽԱՐՀ



## Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԻՆ

### ՎԵՐԱԴԱՐՉԴ ԲՎՐԻ՝ ԵՐԹԴ ՅԱՂԹԱԿԱՆ

Անտարակոյս, վերոյիշեալ մաղթանքը մաղթանքն է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի խումբին բազմաժամանակ համակիրներուն, Լիբանանէն ներս թէ դուրս:

Վերջին տասնամեակին, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբին ինչպէս - չիմնադրուեալ կացութիւնը բնական էր, որ յանգի Բ. դասակարգ փոխադրուելու:

Կարելի չէր կիսամիջոցներով տարիներ շարունակ քաջքշուիլ Ա. դասակարգին մէջ:

Բազմիցս Լիբանանի ֆուտպոլի, բաժակակիր, լիբանանեան ֆուտպոլի ռահվիրաներէն Հ.Մ.Ը.Մ.ի խումբը կ'իմնար Բ. դասակարգ: Խումբին հետ Բ. դասակարգ կը փոխադրուէին նաեւ բազմաժամանակ համակիրները:

Այո՛, բազմաժամանակ համակիրները չլքեցին քեզ, ինչպէս կը պատահի շատ մը խումբերու պարագային: Իբրեւ խումբիդ 12րդ մարզիկը, խունդերամ քեզի հետ տագնապեցաւ ու գնաց մինչեւ հեռուոր մարզադաշտեր, քեզի հետ պայքարելու, քեզի հետ յաղթելու, յստակ վճռակամութեամբ:

Արդի՛ւնք:

Արդիւնքը եղաւ այն, որ Լիբանանի ֆուտպոլի պատմութեան մէջ անսխալութեամբ, առանց պարտութեան ատարեցիր եղանակը, պարագայի դիրքին վրայ: Հասարակական բաժակակիր մրցաշարքի կիսաարտականին: Անանական խումբը հաշիւը ըրին ու անպայման որ մտովին ըսին. «Ահա վերադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի դեղին սատանաներու սարսափը»:

Այսօր բնական դիրքիդ, պատուաբեր վերադարձը է, զոր կ'ողջունենք: Վերադարձը բարի է երթող յաղթական: Քու երթող մէջ դուն պիտի ցոյց տաս քու համակիրներուդ եւ լիբանանցի մարզասէրներուն, թէ դուն վճռած ես երթող շարունակել յաղթական: Թէ դուն, միանգամայն միջոց քանդած ես Բ. դասակարգ վերադարձի բոլոր կամուրջները: Թէ քու Բ. դասակարգ փոխադրուիլը 85ամեայ Հ.Մ.Ը.Մ.ի երկնակամարին վրայ պարպակաւ ամրան սեւ ամպ մըն էր: Այդ սեւ էջը արդէն իսկ փակուած է: Պիտի փաստես շրջապատիդ, յատկապէս համակիրներուդ եւ լիբանանահայութեան, թէ դուն անոնց պիտի պարգեւես այնքան սիրելի ու քաղցրահամ յաղթանակներու հպարտանքը:

Քեզի համար կազմակերպչական «յեղաշրջում» տեղի ունեցած է՝ զօրակցելու քեզի եւ դիմագրաւելու քեզի դէմ ցցուող նախատեսելի ու աննախատեսելի բոլոր դժուարութիւններու մարտահրաւերները:

Դուն կը վայելեմ մեր 85ամեայ միութեան անվերապահ գուրգուրանքը, եւ մեր մեծ կազմակերպութեան հմայքը: Դուն քու կողքիդ ունիս քեզմէ անբաժան քու բազմաժամանակ համակիրներդ: Այս բոլորը վերածուած են «հսկայ նուիրման, տորմիդ հրաթեւ կամաւոր բանակի» մը, որովհետեւ, ինչպէս Մ. Իշխան կ'ըսէ. «Հ.Մ.Ը.Մ.ի մարզադաշտը կտոր մը հայրենի հող էր կարծես մեր ոտքերուն տակ»: Նոյն տրամաբանութեամբ, մեր բազմաժամանակ համակիրներուն աչքին, հայու յարատեւ պայքարի գոյամարտ են Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի մրցումները:

Վերադարձը բարի՛, երթող յաղթական: ԳԵՏՐՈՍ ՇԵՄՄԵՍԵԱՆ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՑ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈԼԻ ԿԱԶՄԻՆ ԵՒ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ

Երէկ երեկոյեան, Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճի սրահին մէջ փեղի ունեցաւ գրոյց-հանդիպում մը՝ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի խումբին համակիրներուն, մարզիչին եւ դասախօսականներուն միջեւ:

Մարզիչ Վաչէ Մարգրիսեան ընդհանուր զաղափար մը փուստ խումբին մասին, անդրադառնալով նորագոյն աշխատանքներուն եւ յայտնելով, որ ինք եւ ֆուտպոլի նոր յանձնախումբը վերջին շրջանին իրենց առաւելագոյնը կ'ապրեցին յատուէն դասախօսութեան համար Շարաք, 4 Նոյեմբերին սկսելիք Լիբանանի ֆուտպոլի Ա. դասակարգի ֆուտպոլի մէջ շրջան ընող համակիրներուն, որոնք քոլէճի սրահը ամբողջութեամբ լեցուցած էին:

Մարգիչը առիթ փուստ նաեւ համակիրներուն, որոնց իրենց հարցումները ուղղեց: Ան մանրամասն լուսարանեց համակիրները եւ անգամ մը եւս շեշտեց չհասարակ «շուկային մէջ շրջան ընող անհիմն փարաձայնութիւններուն»:


Վաչէ Մարգրիսեան խումբին համակիրներուն կոչ ուղղեց ըլլալ համբերաբար եւ առաջին քանի մը մրցումներուն արդիւնքներով չդարել խումբը եւ մարզիկները, որոնք տիրի մայքարին ամէն գնով դասաւորման աղիւսակին առաջին վեցին մէջ աւարտելու ախոյեանութիւնը:

Շարաք օր երեկոյեան ժամը 8:30ին Մայրապի մէջ Նրժմէի դէմ փեղի ունենալիք մրցումին ակնարկելով, ան քսաւ, որ դաշտի փոփոխութեան հարցը ֆեպրեարսին որոշեց միայն քանի մը օր առաջ, որովհետեւ նախատեսուած փեղեակ չէր, որ այդ օր Մարգրիսեան Անանի դաշտը այլ առիթի մը համար վարձուած է (երգահանդէս)...

## ԹԵՆԻՍ

### ՍԱՐԳՍԵԱՆ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՑ ՔԱՖԵԼՆԻՔՈՎԸ

Մոսկուայի մէջ (Ռուսիա) տեղի ունեցող «Քրեմլի» բաժակի միջազգային մրցաշարքին տղոց Բ. հանգրուանին իր կատարած մրցումին, երէկ հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան կարելի էր արձանագրեց երբ 6-4, 2-6 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնեց մրցաշարքին թիւ 8րդ դասուած մարզիկը՝ Եւգենի Բաֆելնիքովը (Ռուսիա):



Սարգսեան

Տղոց կոլի մրցումներուն եւս (Բ. հանգրուան) Սարգսեան, Իրաքի Լապաժի հետ (Վրաստան) յաղթանակ մը արձանագրեց 7-6 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնելով Եոնաս Պիրքման (Շուէտ) - Մարք Նոյուլս (Պոնտիւրիս) կոլը:

Բ. հանգրուանի մրցումներուն, Տրդ դասուած Մաքս Միրնիլ (Պիլիպին) 6-3, 4-6 եւ 7-6 արդիւնքով պարտութիւն մը կրեց Շթեֆան Քուպէքին (Աւստրիա), մինչ 2րդ դասուած արժանիքի Ալիսթին Բայերի 6-4, 3-6 եւ 6-1 արդիւնքով պարտութեան մատնեց Լապաժին:

Աղջկանց Բ. հանգրուանի մրցումներուն, երեք ռուս մարզիկներ՝ Էլենա Տեմենիս (3րդ), Անասթասիա Միսիսկինա (4րդ) եւ Վերա Չվոնարեա (7րդ) յաջողեցան յաղթանակներ արձանագրելով, ապահովել Գ. հանգրուանի մրցումներուն իրենց տոմարը:

**The American Lebanese Language Center**  
**English and Other Languages**  
 From Beginner to Certification levels  
 Other Languages: Spanish - German - Italian - French & Arabic  
 Conversation English: for all levels  
 English for Special Purposes  
 Business, Banking, Finance, Management, Medicine and Law, Travel and Tourism, and Translation

**October 8**  
 new session

**NEW**

- International Cuisine
- Etiquette
- Protocol
- Painting & Drawing
- First Aid
- Yoga
- Dancing

**BT Program**

- Executive Secretary
- Accounting & Computer Services
- Pre-School Education
- Sales & Commercial Relationships
- Interior Design

**American Universal College**

for more information: ALLC - Dbayeh tel: 4- 40 47 65 3- 73 88 53

**ԱՖՀԻԼ AFHIL**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆՆՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**

**RENT AND SALE**

**AT HOME**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen

We Also Provide

- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

**ՑՈՒՑԱՍՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՈՐԸ ԳՐԱՆԵՆԱԿ՝ ԱՅՇԻԼ, ԱՅԵՏԻ ՇԵՆԵ, Բ. ՅԱՐԿ ՇՈՒ. (01) 242556/7**

**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**

**Ղ. Վ. ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ**  
**Երաժշտութեան Կեդրոն**  
**Ս. Խաչ-Չալքա**  
 7րդ ՏԱՐԵՇՐԶԱՆ 2003-2004

Երաժշտական նիւթեր + երաժշտական կազմաւորում

- Դասաւանդման սկիզբ՝
- Շարաք, 11 Հոկտեմբեր 2003:
- Արձանագրութիւն՝
- Շարաք, 5 Սեպտեմբեր 2003էն սկսեալ, ամէն Ուրբաք կեսօրէ ետք, ժամը՝ 4:00էն 8:00:
- Կրթաթոշակ՝ նման նախկին տարիներուն:
- Հեռաձայն 03/251702 եւ 04/710736:

**Մասնագիտութիւնդ ՈՍԿԷ ԱՊԱՐԱՆՋԱԴ Է ՓՕԼԻԿԼՈՒԹ ՔՈԼԷՃ**  
 դիմացդ կը բանայ

**Ա.** Համակարգիչի ԼԵԶՈՒՆԵՐՈՒ եւ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ մասնագիտութիւնը, ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ:

**Բ.** Ոսկերչութեան ու կաղապարաշինութեան վարպետ ըլլալու համար, տարիներ եւ շատ ճիգ է պէտք:

**ՓՕԼԻԿԼՈՒԹ ՔՈԼԷՃ** ամենակարգ ճամբան է այդ նպատակին հասնելու, առաւել՝ վկայեալ վարպետ ըլլալու համար:

Արձանագրութիւն՝ ամէն օր

**ՓՕԼԻԿԼՈՒԹ ՔՈԼԷՃ.** Տորա՛ հեռ. 01/251320

**Հ.Մ.Ը.Մ. ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏ ՄԱՍՆԱԾԻՂ**

**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Գ. ՆԻՍ**

Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովի Գ. նիստը տեղի պիտի ունենայ Ուրբաք, 3 Հոկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Ազիթեան» ակումբի «Ատուր Գապագեան» սրահին մէջ:

ԾԱՆՕԹ.- Երեկոյեան ժամը 8:30ին ներկայանալու թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի:

**Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ**

**ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՎԵՐԱՍՈՒՏ**

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիպս մասնաճիւղի Սկաուտ Խորհուրդն ու խորհրդակցութիւնը այսու կը տեղեկացնեն, թէ սկաուտական մարտիկները կը վերսկսեն Կիրակի օրերը «Անթիլիպս» Հ.Մ.Ը.Մ. համակիրներուն մերսը:

Առ այդ, բոլոր տարազանութեամբ պարտին մերկայ ըլլալ Կիրակի, 3 Յոկտեմբեր 2003ին եւ ամէն Կիրակի, առաւելու ժամը 8:00ին:

ԾԱՆՕԹ.- Կրթութեան նորակներ, ինչպէս նաեւ կը տեղեկացնենք մեր փոքր ծնողներուն, որ ունինք օրորափ դրոթիւն հեռուոր շրջաններու համար:

**Հ.Մ.Ը.Մ. ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏ ՄԱՍՆԱԾԻՂ**

**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Գ. ՆԻՍ**

Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովի Գ. նիստը տեղի պիտի ունենայ Ուրբաք, 3 Հոկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Ազիթեան» ակումբի «Ատուր Գապագեան» սրահին մէջ:

ԾԱՆՕԹ.- Երեկոյեան ժամը 8:30ին ներկայանալու թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի:

Հ.Մ.Ը.Մ. ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏ ՄԱՍՆԱԾԻՂ

